Հարգելի տիկնայք և պարոնայք,

Ներկայացնում եմ Ձեզ <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կողմից նախնական հաստատված 2018թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ կազմված հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համաձայն:

<Յունիբանկ> ԲԲԸ ամփոփել է տարին հաշվեկշռի հետևյալ հիմնական ցուցանիշներով.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	**2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Ակտիվներ	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	32,049,007
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	12,983,447
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	785
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	134,279,082
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	3,817,080
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	12,822,788
Հիմնական միջոցներ	8,549,052
Ոչ նյութական ակտիվներ	1,629,345
Կանխավճարներ շահութահարկի գծով	-
Այլ ակտիվներ	3,669,102
Ընդամենը՝ ակտիվներ	**209,799,688**
Պարտավորություններ և սեփական կապիտալ	
Պարտավորություններ	
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,039,951
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	151,452,004
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	12,813
Փոխառություններ	6,636,888
Թողարկված պարտքային արժեթղթեր	8,576,459
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	60,492
Հետաձգված հարկային պարտավորություն	526,588
Այլ պարտավորություններ	946,049
Ընդամենը՝ պարտավորություններ	**177,251,244**

Հազար ՀՀ դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ	
Սեփական կապիտալ	
Բաժնետիրական կապիտալ	20,489,653
Էմիսիոն եկամուտ	9,605,638
Գլխավոր պահուստ	448,298
Այլ պահուստներ	1,239,518
Չբաշխված շահույթ	765,337
Ընդամենը՝ սեփական կապիտալ	**32,548,444**
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ	**209,799,688**

2018թ. <Յունիբանկ> ԲԲԸ եկամուտների և ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	7	20,008,220
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	7	(9,490,160)
Զուտ տոկոսային եկամուտներ		10,518,060
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	8	2,186,448
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	8	(365,896)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		1,820,552
Զուտ առևտրային եկամուտ	9	824,570
Այլ եկամուտներ	10	1,599,371
Արժեզրկման ծախս	11	(5,525,293)
Անձնակազմի գծով ծախսեր	12	(3,798,717)
Հիմնական միջոցների մաշվածություն	21	(397,354)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	22	(98,388)
Այլ ծախսեր	13	(3,485,842)
Շահույթ մինչև հարկումը		1,456,959
Շահութահարկի գծով ծախս	14	(525,662)
Տարվա շահույթ/(վնաս)		931,297

2018թ. ձևավորվել է 1.606 մլն դրամի հարկվող շահույթ, հաշվարկվել և փոխանցվել է բյուջե շահութահարկ՝ 321 մնլ դրամ:

2018թ. ընթացքում <Յունիբանկ> ԲԲԸ դրամական հոսքերը գոյացել են.

1. Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները՝ 7,366,666 հազ. դրամ:
2. Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր՝ 11,934,298 հազ. դրամ:
3. Դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից՝ 3,302,109 հազ. դրամ:
4. Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից՝ (14,083, 456) հազ. դրամ:
5. Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճը կազմել է 1,152,951 հազ. դրամ:
6. Արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա՝ (912,113) հազ. դրամ:
7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ - 31,843,954 հազ. դրամ:
8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 32,049,007 հազ. դրամ:

Համաձայն <Գրանթ Թորթոն> անկախ աուդիտորական ընկերության եզրակացության՝ <ֆինանսական հաշվետվությունները տալիս են <ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների>:

Խնդրում եմ Ձեզ հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

Վարչության անդամ,
Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյան